ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Խաղաղ երկնքում անսպասելի կայծակի պես շառաչեց Հայ Կաթոլիկ Հովհաննես-Պետրոս Պատրիարքի «Վերադարձ Հայաստան» շրջաբերականը՝ գրված միջնադարյան եկեղեցական անամեջ վեճերի ոճով:

21-րդ դարի շեմին, մեր երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական ալեկոծության ենթարկված այս պահին, «Հայրենիք վերադարձի» ինչպիսի՞ արտառոց հարձակում՝ ավելի անկայուն դարձնելու Հայրենիքի ներքին կյանքը, ազգը բաժան-բաժան անելու այս անգամ եկեղեցական-կրոնական մակարդակի վրա:

Եվ որպեսզի ավելի հստակ հասկացվի մեր ամսագրի նախորդ (օգոստոս) համարում տպված «Մի դժբախտ թուղթ շրջաբերական» խմբագրականի և մանավանդ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի «Հայրական խոսքի» իմաստը, ստորև ապագրում ենք Հովհաննես-Պետրոս ԺԸ Պատրիարքի մոլորյալ շրջաբերականի այն հատվածները, որոնք հանդիսանում են հայ ժողովրդի և Եկեղեցու պատմության ենթագիտումը և ժխտումը Հայ Առաքելական Եկեղեցու և Ս. Էջմիածնի օրինականության և գոյության վավերականության:

Ահավասիկ մի քանի իրապես արտառոց հատվածներ վերոհիշյալ շրջաբերականից:

«Ինչպէս Պատմութիւնը կը վկայէ, Հայոց Եկեղեցին ծնաւ որպէս անբաժան մէկ մասնիկը Քրիստոսի Տիեզերական Եկեղեցիին: Ան մինչեւ Ե-րդ դար, ծլաւ ու ծաղկեցաւ Տիեզերական Եկեղեցիին հովանիին տակ, ուր մշակեց իր ուրոյն Ծէսը, Գրականութիւնը եւ կանգնեց իր եկեղեցական կառոյցները:

Սակայն քաղկեդոնականական պայքարը պառակտեց Հայոց Եկեղեցին, բաժանեց Քրիստոսի անձեռագործ պարեգօտը: Դաւանական հալածանքներու սաստկացումով՝ Հայ Կաթողիկէութիւնը տարտղնեցաւ, դարերու ընթացքին փոքրամասնութիւն դարձաւ, իր ներկայութիւնը միշտ պահպանելով հայրենի հողին վրայ»:

Եվ ահա այսպիսի թշնամանքով Հայ Կաթոլիկ Պատրիարքը ծրագրում է Հայաստան խուժել և «ժողովրդապետություններ հիմնել»:

Ահա թե ինչու Ամենայն Հայոց Կաթողիկոսը խորապես վշտացած, ստիպված եղավ հետևյալ հեռագիրը հղել Հռոմ՝ կարդինալ Ախիլե Սիլվեստրինիին, ի պաշտպանություն մեր Առաքելական ազգային Մայր Եկեղեցու:

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏԻՈՒԹԻԻՆ ԿԱՐԴԻՆԱԼ Ա. ՍԻԼՎԵՍՏՐԻՆԻ

Հռոմ-Վատիկան

Եղբայրական սիրով ստացանք Ձեր շնորհաւորական հեռագիրը և Ձեր բարի մաղթանքները ուղղուած մեր Առաքելական Մայր Եկեղեցիին և մեր համեստ անձին:

Յաւոք սրտի Ձեր հեռագիրը գուգադիպեց մի փաստաթուղթի, որ վերջերս մեր ձեռքը հասաւ, որ կոչւում է «Վերադարձ Հայաստան» *enciclique* 7 Յունիս 1992 թուակիր Յովհաննէս Պետրոս կաթոլիկ հայոց Պատրիարքի ստորագրութիւնը կրող՝ հրապարակուած Պէյրութ, որով յայտարարւում է ի լուր աշխարհի թէ Հայ Առաքելական Եկեղեցին վաւերական քրիստոնէական Եկեղեցի չէ, այլ մի տեսակ հերետիկոս Եկեղեցի Քաղկեդոնի ժողովի հետևանքով:

Մենք այս արարքը գտնում ենք բոլորովին հակաէկումենիկ դիրքաւորում և ամբողջապէս թշնամական մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ:

Այս անսպասելի հրատարակութեան հետևանքով, հայ կաթոլիկ Եկեղեցու ներկայութիւնը Հայաստանում մենք գտնում ենք անցանկալի և մերժելի:

Այսօր Մայր Աթոռում տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովին մեր նախագահութեամբ, որին մասնակցեցին Հայաստանի և արտասահմանից 18 եպիսկոպոսներ ի գլուխ ունենալով Երուսաղէմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս և Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ներկայացուցիչ Մեսրոպ եպիսկոպոս, իրենց վրդովմունքը յայտնեցին Յովհաննէս Պետրոս հայ կաթոլիկ Պատրիարքի վերոյիշեալ գրութեան նկատմամբ և որոշեցին անհրաժեշտ միջոցառումներով պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցւոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակութիւնը և արժանապատուութիւնը հայ հաւատացեալ ժողովուրդի ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ